



ՇԱԲԱԹԱԹԵՐ

Ազգային, Քաղաքական, Բանասիրական և Զուարճալի

Ժող. Տարի, Թիւ 35

ՇԱԲԱԹ

7 Մարտ, 1898

ՊԱՅՄԱՆՆԵՐ. — Իտալիկի բաժանորդացիներն է **Տարեկան**՝ Պոլսոյ համար 40, Գաւառներու համար 50 դամ. : **Վեցամսեայ** Պոլսոյ համար 25, Գաւառաց համար 30 դամ. : **Հասար 30 փարսյ :** Բաժանորդագրութիւնը քիւի վրայ է, տարեկան բաժանորդները պիտի ստանան **52** եւ վեցամսեայները **26** քիւ **Իտալիկի :** Պաշտասխան Գրաստոնը յանձն կ'առնէ հասուցանել բաժանորդներուն վճիռները.

եթէ **Իտալիկի** նշանակութիւնը ո՛ր եւ է աղբիւրի հանդիպի : Ծագիկի բաժանորդներն խաւունք ունին 100 այցեխարս նուէր ստանալու :

Հանքագութեան քիւի վրայ վերաբերեալ յօդուածներ եւ քրթակցութիւններ շնորհակալութեամբ կ'ընդունուի :

ՀԱՍՅԷ. — Իտալիկի վերաբերեալ ամէն ինչ պէ՛տք է ուղղել **Պաշտասխան Գրաստոն**ը, կ. Պոլսոյ, Մարտի Համար, քիւ 14 :

ՀԻՆ ԿՈՆԴԱԿ ՄԷ

Կէս դարէ աւելի է որ Ազգ. Պատրիարքարանէն կոնդակ մը ուղղուած է թէ մայրաքաղաքիս եւ թէ գաւառներու մէջ եզոզ ամէն եկեղեցականներու իրրեւ կանոնադիր հարսանեաց :

Սոյն կոնդակ նոր Հայերուս համար չա՛տ հետաքրքրական է : Նախ՝ ցոյց կուտայ թէ այն ատեն ո՛րքան արտակարգ կը կատարուէին հարանիքները եւ ո՛րպիսի սովորոյթներ կային : Երկրորդ՝ ցոյց կուտայ այն ատենուան Ազգ. Պատրիարքարանի պաշտօնական լեզուն : Ստեփաննոս պատրիարքի ստորագրութիւնը կը կրէ այս կոնդակ, այն պատրիարքի՝ որ իւր հեղափոխութեամբ համար « Ազաւնի » մակդիրին արժանացած էր, եւ որոյ օրով չիտուեցաւ Պէյօղլուի արդի հոյակապ եւ կեղեցիկ Ս. Երրորդութիւն :

ԿՈՆԴԱԿ ՀԱՐՍԱՆԵԱՅ

Ա. Ամենեքին նորա որք կամին ամուսնանայ, կամ ծնողք եւ Ազգականք նոցին՝ նորք ու փորձ արացեն զմիմեանց աւուրս ինչ, եւ տեղեկացին կերպարանաց՝ բարուց եւ կացութեան իրերաց : Եթէ երկրքին կողմունքն հաճ եւ հաւան գտանիցին, կոչեացեն զբահանայս եւ ծանուցեն զկամեցողութիւնս իւրեանց : Եւ քահանայքն քննեցեն զհասն եւ զհասարն, եթէ հաս իցեն՝ զխնամիսն առեալ բերցեն ի Պատրիարքարանս ի սահմանեալ աւուրն՝ որ է Ուրբաթ, եւ տացի նշանն :

Եւ յորժամ այս ամենայն լինիցի, այնու հետեւ առանց բանաւոր պատճառի մի բակեացի հարսնա-

խօսութիւնն : Իսկ եթէ վասն բանաւորութեան քառանձանց ունանց, կամ վասն ազատութեան եւ փառասիրութեան, եւ կամ վասն որպիսի եւ իցէ մտադի եւ անդաւական պատճառի կամիցին քակել զհարսնախօսութիւնն, անաչառ դատաստան լինիցի ի Պատրիարքարանս առաջի ազգային Նազըրաց, բանաւորքն պատժեցին, եւ ինքեանք խրատեցին զգաստանալ :

Բայց եթէ կամակորութեամբ նէփսանիլէ՞մ արացեն քակել, եթէ ի կողմանէ տղային իցէ յամուսնութիւն. նշանն որք աղջկանց մնացէ՞ որպէս սովորութիւն է ի վաղուց հետէ : Իսկ եթէ ի կողմանէ աղջկանն իցէ, զին նշանին տացի որք աղջկանց, եւ զիմադարձն ով ոք եւ իցէ՞ ըստ արժանւոյն դատեցի՞ որպէս եւ արդար իրաւունքն պահանջեն :

Բ. Որով ըստ սովորական եւ քաղաքական կարգի՝ բովանդակ վիճակ ազգիս ի չորս գլխաւոր աստիճանս սրոշի, սմին իրի նշանն, ըզգակն, ճէճէզն՝ ի չորս տեսակս որոշեցան ըստ պատշաճի իւրաքանչիւր աստիճանի այսու օրինակաւ :

Նշանն լինիցի. բուպիյէ ոսկի ըստ յարմարութեան աստիճանի իւրաքանչիւրոց, բայց ծաղիկ, թէլ, շէքէր, ամենեւին մի գտանիցի, եւ մի ոք երկու նշան արացէ, զմինն յայտնի տալով եւ զմիւսն ծածուկ ի սուսն աղջկանն առաքելով :

Նշանն առաջին էրայի 50 բուպիյէ, եւ արժան տուփ մի, եւ շէվրէ, եւ ըզգակն մինչեւ տասն հազար զրուշի եղիցի : Ժէճէզն չորս խաթ, ախլ պու-

հուր էնծարի, սէվայի էնծարի, Սէլիմիյէ էնծարի, իրիէքի փէսէնտ, իշլէմէ էնծարի, եւ քիւրքն՝ վար- շախ՝ սամուր, էլմա, քաքում եւ երեք շալ, գլխու կապելիք, կանաչ գունով ամենեւին մի՛ լիցի:

Նշանն երկրորդ էլայի 40 բուպիէ, արծաթ տուփ մի, եւ մէկ չէվրէ, եւ ըռզակն մինչեւ հինգ կամ վեց հազար զրուշի ճէհէզն երեք դամ լիցի, էն- ծարիքն՝ սէվայի, սէլիմիյէ, շալաքի, եւ քիւրքն՝ սա- մուր, էլմա եւ քաքում, եւ երկու շալ լիցի, եւ կա- նանչ գունով գլխու կապելիք մի՛ լիցի:

Նշանն էվսատի՝ 30 բուպիէ, մէկ արծաթ տուփ եազմայ տէստիմէլով, եւ ըռզակն մինչ երեք հազար զրուշի, եւ ճէհէզն երեք դամ, էնծարիքն սէլիմիյէ, շալաքի, ազոէզա, եւ քիւրքն սամուր, էլմա, զըն- ճապ, եւ մէկ շալ լիցի:

Նշանն առաջին էտնայի՝ 10 բուպիէ մէկ հա- տարակ եազմայով, ըռզակն մինչ հինգ հարիւր զրուշի եղիցի, ճէհէզն երկու դամ լիցի, էնծարիքն՝ թէլի հարիր, եւ չէծարի, քիւրքն՝ նաֆէ եւ զընճապ, եւ մէկ ինկիլիզ շալ:

Նշանն երկրորդ էտնայի՝ 5 բուպիէ մէկ տէս- տիմէլով, եւ ըռզակն մինչեւ հազար զրուշի լիցի, ճէհէզն մէկ դամ՝ մէկ թեթեւ հազիր էնծարի, մէկ նաֆէ քիւրք, կամ մէկ չուխա չաքէթա եւ մէկ թե- թեւ ինկիլիզ շալ:

Գ. Ի հանդերձս հարսին մի՛ գտանիցի մարգա- րիտով՝ փուլու թըրթըրը թէքէպաշի միալիլի բանած լամեղէն, եւ կամ մարգարիտով՝ փուլով կամ թըրթը- րով բանած գլխու կապելիք, բանուած կամ անվա- յելուչ կերպ կերպ շապիք կամ հարսի չէտիք փապու- ճի վրայ կլապտանը սըրմալը բանուած, կամ կըլապ- տան կամ սըրմայ խարճով կամ մարգարտով թախտայ բապուճի, թէրիկ, ֆիխա, նալըն, քարեղենով զար- դարուած սանտրուած սանտր, եւ այլ այսպիսի ինչ:

Պօխնալըխ փեսայի կամ կնքահօր կամ ուրիշի, եւ կամ փոխանակ պօխնալըխի այլ ընծայ՝ բոլորո- վին մէն եղեալ է:

Դ. Քէսէպիչէ անուան ամենեւին մէն եղեալ է, այլ ըստ սովորութեան մէկ շաբամ յառաջ քան ըզ- հարսանիքն՝ հարսանեաց տեսարքն ընդ քահանայից իւրեանց ի միասին եկեալ խօսքկապ արասցին առ ի որոշել եւ յատկացուցանել զօրն հարսանեաց:

Բաղանեաց ստակ ամենեւին չըլլայ, եւ հար- սընցուն հասարակ առուր պէս ի բաղանիս տանին ամենայն պարկեշտութեամբ, ամենեւին հանդիսու- թիւն չըլլայ, եւ բաղնեպանին ուրիշ ժամանակ ինչ հախ կուտային՝ նորնչափ տան, հարսանեաց պատ-

ճառու մէկ փարայ աւելի չըտան, եթէ բաղնեպան- քնն աւելի փարայ ուզեն, գան ի Պատրիարքարանն խապար տան:

Ե. Քօղքն սատէ չիչէքի սէլիմիյէ լինիցի, մի օրինակ էլայի, էվսատի եւ էտնայի, եւ ոչ բնաւ յայլ ինչ նիւթոյ, զի արգիլեալ է ամենեւին:

Էլլա եւ էվսատ հարսնէտէրքն՝ յետ լրանալոյ հարսանեաց առաքեսցեն զայն քօղքն յեկեղեցի թէ- մին իւրեանց առ խնամակալուն որբ աղջկանց. զի յորժամ որբ եւ աղքատ աղջկունք ամուսնացեն, տացէ նոցա ճրի զի արասցեն քողք, եւ շինեսցեն յետոյ հանդերձ եւ զգեցցեն, որ աղօթող լինիցին վստն պարգեւողաց նոցա:

Քօղքի վրայ էլմասեղէն բան կապել, կամ թէ- լէ չէլէնկ կապել ամենեւին մէն եղեալ է, փափաք ու- նեցողն եթէ թէլքէչէ ունիցի, ի վերայ քօղքին զայն թէլքէչէն կապեսցէ փոխանակ չէլէնկին:

Զ. Տեսարք հարսանեաց մի՛ կոչեսցեն զբարե- կամս կամ զղրացիս իւրեանց ի հարսանիս, եւ եթէ կոչեսցեն եւս հրաւիրեալքն մի՛ գնացցեն վստն Սահ- մանադրութեան ազգային կանոնաց, եւ մի բնաւ ու- դարկեսցեն ընծայս ինչ՝ աչք ի լոյս, կամ յերեստե- սէ, կամ այլ ինչ անուամբ՝ թէ յառուրս հարսանեաց եւ թէ յետոյ: Իսկ եթէ առաքեսցեն ոմանք՝ տեսարք հարսանեաց մի ընդունիցին զընծայան՝ այլ յետս դարձուցեն:

Շարունակելի

ԳԱՌՆԻԿԻՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Հայր մը իր զաւակին համար զպրօցի թուղթի, գրքի, մեղանի եւ այլ պիտոյից ստակ տալէն ձանձրանալով տղան առջին կանչելով ըսաւ:

— Գառնիկ, այսչափ ատեն է դպրոց կ'երթաս կու- գաս, օր մը չտիկէ չիտակ հայերէն խօսք մը խօսած չու- նիս սուռնին մէջը, ամէն օր ալ կը պարծենաս որ Գա- ղիերէն, Տաճկերէն, չեմ գիտեր ինչերէն կը սորվիս, սա մեր տուած ստակներուն պատուը երբ պիտի վայելենք, անանկ ուրիշ լեզուներ չգիտենք նէ, հայերէն քիչ չատ կը հասկնանք, Տաճկերէն բառ չխառնած սալթ Հայերէն կրնաս խօսիլ նէ սանկ դէմս եկուր աէ խօսք մը ըրէ նայիմ, որ ես ալ տուած ստակիս վրայ քիչ մը հովահ- րիմ:

— Կանոնաւոր աշխարհաբառ լեզուով կուզես որ խօսիմ, աղա՛պա:

— Հա, իշտէ անանկ ամա, ատ աղապա ըսելը ի՞նչ պիտի ըլլայ, ատիկա Տաճկերէն չէ՞:

— Ես տահա չէի խօսէր կոր:

— Հապա կը հազայի՞ր կոր :

— Չէ, աման՝ . . . իշտէ, ի՞նչ կուզես որ խօսիմ :

— Ի՞նչ կուզես նէ ան խօսէ, ես ալ քիչ քիչ քենէ կը սորվիմ :

— Աղէկ կ'ըլլայ, կուզես նէ անցած օր Պետիկին հետ պարտէզ գացինք, անոր պատմութիւնն ընեմ :

— Խօսք մը ըրէ տէ, ինչ կուզես նէ ան ըրէ :

— Անցեալ օր զՊետիկ եւ ես պարտէզ գացինք, հոն պրասի արտը մտանք, եւ զպրասներուն շատ հաւնեցանք :

— Ծօ զպրասը ի՞նչ է :

— Ա՛նչ պիտի ըլլայ փրասա ըսել է :

— Հայերէ՞ն, չէ նէ Տաճկերէն :

— Փրասային հայերէն պրաս կ'ըսեն, հայր իմ :

— Ես հապա դուն զպրաս ըսիր նէ :

— Ան Ձ անոր նախդիրն է, չես հասկնար, ինտոր ըսեմ, իշտէ սիւնն է, Ձ մը դնես նէ կանոնաւոր աշխարհաբար կ'ըլլայ :

— Էյ ինչ է նէ, հէլպէթ կը սորվինք, բայց սա արտ ըսածդ ի՞նչ է, արտը չիֆթիք չէ՞ :

— Չիֆթիք է ամա, իշթէ չիֆթիք, թարլա, ամէնը մէկ ըսել է. զՊետիկ ըսաւ որ, զպրաս մը փըրցունենք, եւ զկրակով խորովենք, շատ աղւոր կ'ըլլայ :

— Ծօ աղւորն ալ հայերէն է :

— Հապա, մանաւանդ աղւորներուն շատը Հայերուն մէջն է :

— Հըմ... ատիկա զպրոցէն կիտես . . . է՛յ, հայտէ նայինք :

— Ձկրակը վառեցինք, զպրասը խորովեցինք, անանկ աղւոր եղեր, անանկ աղւոր եղեր էր որ, մաղ մնաց զմասներս ալ հետ ուտէինք :

Ծօ, ո՞վ պիտի մատնէր, պարտիզպանը վրայ հասաւ :

— Չէ, ո՞վ պիտի մատնէր, մատնէր չեմ ըսեր կոր, զմասներս ըսելը սանքի մատուցներինս ըսել է :

— Էյ մատուցներինս ըսես նէ Հայերէն չէ՞ որ զմատներ կ'ըսես կոր :

— Ծանըմ, Հայերէն է ամա, ան անոր սիւնն է ըսինք ես :

— Ես, սիւնն է, հէ՞. էյ անանկ է նէ պատմէ նայինք, աս է նէ ես սորվեցայ :

— Օր մըն ալ Պետիկին հետ պարտէզ գացինք, ծառին վրայ անանկ կեռաս, անանկ կեռաս, զոր մարդ չը դիմանար :

— Ի՞նչ կ'ըսես Գառնիկ, խելքի՞դ կուգայ կոր, ծառը ո՞ւր, իմին կեռալս ո՞ւր, ինչո՞ւ պիտի կեռամ, ծառին վրայ ի՞նչ բան ունիմ :

— Կը կեռաս չեմ ըսեր կոր, հայր իմ, ծառին վրայ կեռաս կ'ըսեմ կոր :

— Ծօ իշթէ ես ալ ան կ'ըսեմ կոր, ես օր մը ծառը ելած ունիմ որ ծառին վրայ կեռամ :

— Օ՞ք... կեռաս ըսելը քերազ ըսել է, ծառին վրայ կարմիր քերազ կար կ'ըսեմ կոր :

— Հա, կեռաս՝ քերազ, պրասն ալ փրասա, էյէր չիտակ է նէ, Աստուծու բարին, ես չափուի կը սորվիմ,

չէ սուտ ես նէ գիտցած եղիր որ վարժապետիդ պիտի հարցնեմ : Ինչ է նէ, դուն խօսքդ նայէ՛ :

— Չղիմացանք հայր իմ, ինչու զսուտ խօսիմ, զՊետիկին հետ խորհուրդի նստանք, զխորհուրդ, զխորհուրդ, միտք ըրինք որ մէկերինս զմիւսին ուսին կոխենք եւ զծառն ելլանք, զկեռաս ժողովենք եւ . . . :

— Ծօ միւսին ալ հետերնիդ զողովեան ելաւ :

— Ինտոր միւսի, հայր իմ :

— Իշտէ սա ձեր դասատուն, միւսիւ չէ՞ք ըսեր :

— Հա, հայրիկ, վարժապետին միւսիւ կ'ըսենք ամա, ան հետերինս չէր :

— Հիմա դուն ըսիր միւսիւ տէյի :

— Միւսիւ չըսի, հայր իմ, ուսին ըսի, քովի ընկերիս ուսին :

— Ուսը ի՞նչ է :

— Ուս տէյի ուսուցին կ'ըսեն :

— Կենէ ինծի մանտալին կապեցիր, օմուզ հէ՞, բէք աղէկ, աս ալ վարժապետիդ պիտի հարցունեմ :

— Թող չես տար որ բան մը պատմեմ, ըսելիքս ալ մոռցայ, զկեռաս ժողովեցինք եւ զկծիկը զրինք :

— Կծիկը ո՞ւր զրիր, անցած օր մարդը լէվին լէվին կը փնտռէր կոր :

— Օ՞ք . . . մարդուն մէրազը կը հանես, փախանք պիտի ըսէի, անուշ գայ տէյի կծիկը զրինք ըսի :

— Դիտեմ որ աչքդ անուշին է ես, ծօ Մարտիրոս, Գառնիկին անուշ մը բեր, ասանկ լուսմիզով հասկցունելուդ նայէ, խօշլանմիշ կ'ըլլամ . . . : Էյ պարտիզպանը ետեւնուդ չհասաւ :

— Չէ, ո՞ւր պիտի հասնի, մենք խուշի պէս փախանք :

— Աճէրիմ օղլուս, իշտէ ասանկ ամեն ատեն փախչելու եւ ետեւն ձեռք տալու չէ, իշկիւզարութիւնը ան է :

— Այսչափը հերիք է, հայր իմ, կատարեւապէս գոհ եղար :

— Ծօ ինչո՞ւ գող կ'ըլլաս կոր, ծառէն եէմիշ փրցունելը գողութիւնն է :

— Չէ ան չեմ ըսեր կոր, սանքի սորվածս ինտոր է, աղէկ գիտե՞մ կոր :

— Սորվածդ ատ է նէ բան մը չէ, մե՛ղք էր փառաներուն, ես մէկ չէյրէկին մէջ սովորեցայ :

— Ինչ սորվեցար ես ալ չիյտեմ, հինգ տարի դաս կ'առնեմ տէ, ես անձախ սորվեցայ, դուն մէկ չէյրէկին մէջ պիտի սորվէի՞ր :

— Ծօ ինչո՞ւ չես հաւատար կոր, կեցիր ես ալ քեզի պատմութիւն մը ընեմ տէ դուն մտիկ ըրէ :

— Ըրէ նայիմ :

— Անցած օր զշուկան զբարեկամին մէկը զծուխ մը բերաւ :

— Ծուխը ի՞նչ է. հայր իմ :

— Ի՞նչ պիտի ըլլայ, միւշտէրի :

— Գըռ զըռ զըռ... ծուխ տէյի մուխին կ'ըսեն :

— Ըհ զէլզէկ դուն ալ, քառսուն տարի է ծուխ տէյի միւշտէրիին կ'ըսեն, խայրի աղէկը զիտեմ, ըսել է քիքու ամէն զիտցածդ ալ ատոր պէս է, ես ալ կը նայիմ

կոր քի ըսածներդ փէք ուշմիշ չըլլար կոր, պրաս, փրաս, կեռաս քիւտդ, իրարու հետ յարմարութիւն չառներ, սեպէ քի երկուքն ալ Տաճկերէն է:

— Հայր իմ, ծովս տէյի մուխին կ'ըսեն, կուղես նէ բառարանը բերեմ նայէ:

— Ծօ ի՞նչ բառարանը պիտի բերես, հիշ որ չէ նէ սա տէրտէրներուն ծովը միտքդ բեր, անոնք նայինք ինտո՞ր միւշաէրիյին ծովս կ'ըսեն կոր:

— Ես անանկ բան չիյանեմ, բառարանը կը նայինք, ի՞նչ կ'ըսէ նէ ան է, մուխ տէյի գրած ըլլայ նէ ամառուան բարտըսիւ մը կը չինես:

— Հիմայ ստակ չկայ, թող քու խօսքդ ըլլայ, մենք մեր խօսքը նայինք, ի՞նչ կ'ըսէի կոր, հա, գրարեկամիս զծովը ինէ տասը թօփ ճերմակ առաւ, զկէս ստակը տուաւ եւ զկէսը կախեց, զեսքը նայեցանք որ զթախճի է եղեր:

— Զթախճի՞ն ինչ է:

— Ի՞նչ պիտի ըլլայ չհասկցա՞ր, պաթախճիին հաներէնը, Զ ալ վրայի սիւսն է, սիւսիւ պաթախճի:

— Գըռ գըռ . . . աղապա պաթախճիին հայերէն թախճի՞ կ'ըսեն, չէ, աղապա պաթախճիին թախճի չեն ըսեր:

— Շունա պաք, իքի լուղէթ էօյրէնմիշ տէյի գալդմըջ տա պանա պէյէնմէյօր, տարի մըն ալ երթաս նէ, իս թէրպիյէ ընելու պիտի ելլաս, հասկցայ, վաղուընէ թէզը չի կայ քեզ չարչը պիտի հանեմ, որ ասըլ հոն լեզուին չիտակը սորվիս աէ մարդ ըլլաս, ինծի պէս էշ չըլլաս:

ՄԱՆՐ ՄՈՒՆՐ

Մասնաւոր դուռը Հոլանտայի մէջ. — Հոլանտայի մէջ շատ մը հին տուներ կան որոնք մասնաւոր դուռ մը ունին, որ միմիայն երկու առիթներու կը բացուին — երբ հարսնիք մը ըլլայ կամ մահ մը պատահի: Հարսը եւ փեսան այս դռնէն ներս կը մտնեն, որ ասին այդ դուռը կը գամուի եւ ետին հաստ ցողեր կը դրուին: Այս պէս կը մնայ մինչեւ որ ընտանիքին մէջ մահ մը պատահի, երբ նոյն այդ դուռը բացուելով մոտեալին մարմինը ատկէց դուրս կը հանեն:

«Աչքը բաց» մարդուն համար միշտ չա՛հ կայ, վերջերս Բարիդի մէջ մարդ մը՝ սրճարաններու եւ նմանօրինակ զբօսավայրերու մէջ հետաքրքրաշարժ տնտեսուն մը ի տես դնելով (Փուլէ Գափուսի գտնուող «Ամերիկա» զանգը կէօլլէրինտէն Աֆրիգանըն չէօլլէրինտէն) ին նման) բաւական ստակ շահեր է Բարիդիներուն ապուշ զատակարգէն: Այդ տնտեսունը բաւական հետաքրքրաշարժ բան մըն էր, եւ բաւական թուով Բարիդիներ «հինգ սանդիւմ» վճարելով հաճոյք կը պիտի վայելելով այդ արարածին սեպը: Կը հետաքրքրուէին սակայն հասկնալու

համար թէ այդ տնտեսունը ի՞նչ էր, կամ տնտեսուններու ո՞ր դասակարգին կը պատկանէր: «Շատ տարօրինակ կենդանի մը» կ'ըսէին, ապահար եւ մեր մարդուկը սանդիւմները կը քաշէր ու կը քաշէր:

Օր մը սակայն անցորդներէն մին որու կ'ընկերակցէր իր շունը, ներս մտաւ: Յանկարծ այդ տարօրինակ արարածը ետ քաշուեցաւ, պզտի ուղտի մը ձեւը առաւ ու սկսաւ «ֆըսս, ֆըսս, բֆֆ, բֆֆ» ձայներ հանել: Հանկուկը լուծուած էր: Ածիլուած կատու մըն է եղեր. . . .

Ծիծաղաշարժ չէք մը. — Օր մը Ամերիկեան պանքայի մը կրներկայացուի տիկնոջ մը կողմանէ Զէք մը, վճարելի «Անուշներու Անուշին» հրամանին: Այդ Զէքը՝ տիկնոջ տրուած է եղեր իր ամուսնէն: Տիկնոջ իր կական տնունը կ'ստորագրէ «ստացայի» տակ. բայց վճարող պաշտօնէան կը պնդէ թէ պէտք է որ ինչ անունի հրամանին որ քաշուած է նոյն անունով ստորագրուի, տիկնոջ կ'ստորագրէ, ստացայ:

Անուշներուն անուշը:

Այդ չէքը յիշեալ պանքային տնտեսի գրասենեկին պատին վրայ կախուած կը կենայ:

Բարիդի ծառերը. — Շատ քիչեր գիտեն թէ որչափ ծառ կայ տնկուած Բարիդի զանազան հրապարակներու եւ ծառուղիներու վրայ: Ամբողջ Բարիդի մէջ կան 87655 ծառ, որոց իւրաքանչիւրին անուանական արժէքն է 175 ֆրանք, եւ տարեկան 262500 ֆրանք կը ծախսուի զանոնք խնամելու համար:

ԶՈՒԱՐՃԱԼԻՓ

Պիւր գաշ զուրուշում վար, չուկարը հա՛նկը ֆօն-տօյա ետթրրայրմ տէրօին:

— Պանա գալսա ճէպլինտէ ետթրրան հէփսինտէն էյի տիր:

Փօլ. — Կիւլ քի չիշմանլանտարն:

Ռօղիկ. — Հը՛մ, աէմէք իսթէրսին քի «Շիշմանլան» քի իւսթիւնէ կիւլսիւնլէր:

Լ. — Կ'ըսեն թէ Բրէնա տը կայը ձեռք մը հա-գուստը մէկ անդամէն աւելի չհասցնիր:

Ք. — Ինչ կելլայ ատկէց, ես ալ անանկ կ'ընեմ, մինակ իմ մէկ անգամա քիւշ մը երկնկէկ կը քշէ:

Երեկոյթի մը առթիւ ճաշի ատեն ներկաներէն մին (Եանքի մը) ռաքի ելնելով, «Գրաւ կը դնեմ որ ձեզի բան

մը պիտի ցցունեմ զոր մինչեւ ցարդ ընաւ տեսած չէք. զայն պիտի տեսնէք մէկ երկու երկվայրկեանի չափ, եւ տեսնելէդ վերջը մէկ մըն ալ յաւիտեան տեսնելիք չունիք:

Գրաւը ընդունուեցաւ 100 ոսկի:

Եանքին սեղանին վրայ գտնուած պնակի մը մէջէն կաղին մը առնելով ներկայից ցցուց. «Ասոր միջուկը եւ ոչ մէկերնիդ տեսած էք». կաղինը կոտորելով եւ միջուկը մէկ երկու երկվայրկեան բռնելով, կը տեսնէք կորն, եւ իսկոյն բերանը նետին ու ծածկով կլլեն մէկ ընելով, «մէկ մ'ալ տեսնելիք չունիք»:

Եանքին 100 ոսկին չահեցաւ:

• • •

Համբելով քնանալ. — Խնչպէս, երէկ զիշեր քնացա՞ր. Տուած խորհուրդիս հետեւեցա՞ր. մինչեւ քանի՞ համբեցիր:

— Մինչեւ 18000:

— Եւ յետոյ քնացա՞ր:

— Ոչ, առտու եղեր էր:

• • •

Խաղալիքներու վաճառատան մը չուրջը:

Ձարեհ (6 տարեկան). — Մայրիկ՝ իմին պիտիտիկ աղջիկս ըլլայիր նէ աճապա քեզի ներս տանէի տէ ինչ խաղալիքներ պիտի առնէի:

• • •

Լեւոն. — Կ'ըսեն թէ Դ. էֆէնտին մէկ ատենախօսութեան համար 100 ոսկի կ'առնէ:

Տիրան. — Բէ՛հ, ատիկա բան մը չէ, ես մէկը զիտեմ որ խիստ կարճ մէկ ատենախօսութեան համար 10000 ոսկի առաւ:

Լեւոն. — Իրա՞ւ:

Տիրան. — Այո, Այրի կնոջ մը «կը սիրեմ զքեզ» մը ըսաւ եւ հետը ամուսնացաւ:

ԱԼԹՄԸՇ ՓԱՐԱՅԱ.

Անցեալները օր մը զրասնեկիս զուրսը, փողոցը, փերեզակ մը իր ծախու հանած նիւթերը քարոզելով կը պոռար մինչեւ իրիկուն:

Որչափ որ զինքը լուծիւն հրաւիրելու խօսքեր ըրինք մտիկ չըրաւ, մարդը կրկին կը պոռար իր քարոզին եղանակովը զլուսինիս ցուցնելու աստիճան:

Այսու ամենայնիւ իր խօսքերը բաւական զբօսեցուցիչ ըլլալով պարտաւորեցանք գործերնիս ձգել եւ զինքը մտիկ ընել, ընթերցողներ, դուք ալ մտիկ ըրէք, որպէս զի իրաւունք տաք մարդուն զմեզ զբաղեցնել կարենալուն:

Հէր նէ ալըրսան ալթմըշ փարայա:

Կուզեմ կուզես հիսապ տէֆթէղի ալթմըշ փարայա:
Պաթաքճը մալը ալթմըշ փարայա:

Ինսանըն տէրիսինի սոյան սապօն տա ալթմըշ փարայա:

Ճօլինս ճէպլէրի օ տա ալթմըշ փարայա:

Կաղէթալարտա պիր թօրպա հալան ալթմըշ փարայա:

Էլիֆ պէի էօյրէնմէզտէն մուհարրիրլիյէ գալգըշանլար ալթմըշ փարայա:

Պիր տուզինա վարժապետ ալթմըշ փարայա:

Մէքթէպ բրօկրամլարը օ տա ալթմըշ փարայա:

Չօճուզլարըն շիմտիքի դաստիարակութիւնը տա ալթմըշ փարայա:

Տօլանտըրըճը մալլարը ալթմըշ փարայա:

Եօլճը մալլարը ալթմըշ փարայա:

Պիր զաղէթաճընըն սըրթընտաքի քալաֆաթլը սէթրիսի օ տա ալթմըշ փարայա:

Պու հանը տա ալթմըշ փարայա:

Օ հանը տա ալթմըշ փարայա:

Վիէնա բանթալօնու օ տա ալթմըշ փարայա:

Իքի հիւզ լիրա թրախօմա ալմայա պէքլէյէն պօշ կէզէն միւսիւլէր օ տա ալթմըշ փարայա:

Ամուսնալուծութիւն յօդուածլարը տա վար ալթմըշ փարայա:

Ալըրսան ալ, ալմասան ալմա, օ տա ալմըշ փարայա:

Ալէվրա գաչագճըլարը օ տա ալթմըշ փարայա:

Մէզաթ մալի ալթմըշ փարայա:

Սօդազլարտա կէճէնին հարըսընա գատար թուրէտէն մատամ վէ մատմազէլլէր տէ ալթմըշ փարայա:

Պուշլար Բարիզ մալլէրի սիր, օ հանը տա ալթմըշ փարայա, պու հանը տա ալթմըշ փարայա:

Իքի սաաթտան երթըլըր չօրապլար ալթմըշ փարայա:

Պօղատատան չըզմազ մանտիլլէր ալթմըշ փարայա:

Մատամ մատմազէլ շարկալարը պիր լիրա, ֆազաթ իքի կիւն կէշտիքաէն սօնկրա օ տա ալթմըշ փարայա:

Իքի օզգա զաղէթա օ տա ալթմըշ փարայա:

Պիր թազըմ քիթապլար օ տա ալթմըշ փարայա:

Հէր չէշտտէն վար ալթմըշ փարայա:

Տէսթէրէ ազըլը չաղըլար ալթմըշ փարայա:

Մօնչէր կէօզլիւքլէրի ալթմըշ փարայա:

Պալոյա գաչան մատմազէլլէր բէսիմլէրի ալթմըշ փարայա:


Գօճասընը պրազըպ էվտէն գաչան մատմալար օ տա ալթմըշ փարայա:

Պուշլար խըվըրզըվըր մալլէրի սիր, օ հան տա ալթմըշ փարայա պու հանը տա ալթմըշ փարայա:

Հէր նէ ալըրսան ալթմըշ փարայա:

Էֆէնտիլէր, ազալար, միւսիւլէր, մատմալար վէ մատմազէլլէր, պազընըլ նէ կիւզէլ չէշտտէր, ալընըլ, հէփսի տէ ալթմըշար փարայա:

Պազընըլ Մաղիկին պօշպօղազըլընա օ տա ալթմըշ փարայա:



ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

ԽԱՐԵՐԴԷՆ ԼՈՒՐԵՐ

Անգլիացի Եղուարդ Միլարտ, որ բաւական ատենէ ի վեր հոս կը գտնուէր, գէպ իր հայրենիքը ուղեւորեցաւ։ Այս ամսուն խորքերդի գիւղերուն մէջ երեք ամսնաթողումներ տեղի ունեցան՝ հակառակ գինիի շուրջ դարձող Պետրոս վարդապետին կամացն։

Խորքերդի գիւղերէն հարիւրաւոր կիներ իրենց պանդուխտ էրկիններուն նամակներ ուղղելու են սա պայմաններով «Կամ թողման գիր, կամ վերադարձ եւ կամ դրամ, եթէ ոչ մեր գլխին ճարը կը նայինք» . . . Ինչ գանելի, ինչ անհամեստ ընդվզում։

Մամուրէթ իւլ Աղիզի Գերման դաստիարակներէն մին՝ յանկարծակի խենթեանալով կը թափառի ցերեկ գիշեր հոս ու հոն։

Հակառակ մեր եկեղեցական Ս. օրինաց Բալուցի ոմն իր քննին առաւ եւ Հիւսէյնիկցի մ'ալ իր խոս հարսը, անպաշտօն պատուելի մը պսակումովը։ Ինչ սըրբապղծում . . .

Հարիւրաւոր գիւղեր քահանայի պակասէն ոչ միւրտութիւն ունին եւ ոչ մեռելաթաղի հանգէս։

Ս. Պատրիարքը՝ Շք. օրը Մարաշի Որբանոցին համար 30 ոսկի եւս ղրկեց։

— Երկուշաբթի Պուլկարական շողեւանով Վառնայէ իրր 90 հայ դաղթականք դարձան Պոլիս, մեծ մասը խապուղցի։ Պէտք եղած օրինական տրամադրութեանց կատարումէն ետքը պիտի արձակուին։

— Խառն ամուսնութեանց խնդրոյն պատճառաւ, Հայոց եւ Յունաց Պատրիարքարաններու միջեւ բացուած բանակցութիւնները մէկ նստի մէջ աւարտած չըլլալով, չարթուս մէջ որոշեալ օր մը, Յունաց Պատր. Փոխանորդն եւ Տիմիթրիոս Չօլաքիտէս էֆ. մեր Պատրիարքարանը գալով պիտի շարունակեն արդէն սկսուած բանակցութիւնն, երկուստեք իրաւախոհութեամբ օրինաւոր կարգադրութեան յանգելու։

— Ս. Պատրիարքն Հինգշաբթի օր Դատական պաշտօնարան գնաց, իր հետն ունենալով Ա. դործակատար էֆէնտին, ի տեսակցութիւն Վսեմ. նախարարին հետ։

— Չորեքշաբթի օր Ս. Պատրիարքն, հետն ունենալով Ա. Գործակատար Տէր-Նէրսէսեան Տիգրան էֆ., Կայս. Պալատ գնաց եւ տեսակցեցաւ Ա. Քարտուղար Թահսին պէյի հետ։

— Հայ-Հոռովմէականաց Գեր. Կ. Պատրիարք Տ. Ա. զարեան Սրբազան Չորեքշաբթի օր այցելութիւն տուաւ Քրանսական գեսպան Մ. Քանպոնի։

— Չորեքշաբթի առաւօտ ի Բերայ, Ս. Պատրիարքի բնակարանին մէջ, Հիւսէյնիկցի վարչական Յանձնաժողովն եւ Տիկինաց Խնամակալութիւնը միասին նիստ գումարեցին նախագահութեամբ Ն. Ամինապատուութեան,

իւր հետ խորհրդակցեցան Հիւսէյնիկցի հիմնական բաւարարութեանց վրայ։ Խնամակալութիւններէն ներկայ էին Տիկին Երանուհի Կիւմիշկէրտան, Տիկին Աղաւնի Գազաբեան, Տիկին Էլիզա Ի. Յարութիւնեան եւ Օր. Մարի Միւհէնտիսեան, Հրաժարած է Տիկին Պ. Կիւլպէնկեան, եւ բացակայ էր Տիկին Յ. Գարամանեան։ Իսկ բացակայ կը մնան Տիկին Զ. Տիւլպէր, Տիկին Շապուրով եւ Տիկին Աղասեան։ Տքդ. Խորասանճեան էֆ. ներկայ էր, եւ պնդեց իր նախկին առաջարկին վրայ թէ ազգայինք գթութեան այս մեծ յարկին մէջ մէկ ամսական կասկէ իրենց կարողութեան համեմատ։ Ս. Նախագահը, չեչաւելով այսպիսի նուիրատուութեան մը կարեւորութիւնն ու գործնականութիւնն, առաջարկեց որ մինչեւ 5 զրչ.ի ամսական ընդունուի, եւ մասնաւորապէս Խնամակալութիւնը ընտանիքներու մէջ ծաւալեն ամսականի դրութիւնն։ Այս առաջարկ ընդունուեցաւ, պահպանելով հանդերձ մեծագոյն գումարներու հանգանակութեան տարեկան դրութիւնը, զոր վարչական Յանձնաժողովոյ անդամներն ի դործ պիտի դնեն, այս օրերս հանգանակութեան պտրտելով։ Հիւսէյնիկցի մատակարարութիւնը շատ անձուկ է։ 1200 ոսկիի պարտք դիզուած է։ Անմիջական հանգանակութիւն մը անհրաժեշտ է։ Որոշուեցաւ նաեւ որ ինամակալութիւնը վերին հսկողութիւնն ունենան Հիւսէյնիկցի մաքրութեան, թէ՛ այրերու թէ՛ կիւնիւրու կողմը, մանկանց հոգածութեան, եւ ընդհանուր զգեստեղինաց։ Ս. Պատրիարքը պնդեց մայրապետներու պէտքին վրայ, եւ այսպիսի «հոգեւէր կիներու» նաեւ արանց բաժնին մէջ ծառայութեան փորձեալ օգտակարութեան վրայ, ի վերջոյ, որոշուեցաւ լրագրաց միջոցաւ կոչում ընել ընդհանուր ազգին զթասէր զգացումներուն։

Փափաղեան ընտանիքը իւր խորհին շնորհակալութիւնը կը յայտնէ ամէն անոնց որք ներկայ գտնուեցան

ՏԻԿԻՆ ՇԱԶԻԿ ՓԱՓԱԶԵԱՆԻ

յուզարկաւորութեան տխուր հանգէսին եւ իրենց ցաւակցութիւնը յայտնեցին։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Պէլլինէր Դակէլպաթ Բէքինէ կ'իմանայ թէ Ճարոն իր բոլոր փաճառականական նաւերը կը համախմբէ Ճարոնական ջուրերուն մէջ։ Ասիկայ կրնայ նշանակել թէ Ճարոն ծանր գէպեր կը նախատեսէ։

— Բէքինէ կը հաղորդուի Լոնտոն թէ Ֆրանսա մտադիր է գրաւել Ղէէ Չաու՝ Քուսնկ Դունկի թերակղզին վրայ։ Այս նաւահանգիստ Ֆրանսական նաւատորմին իրր յենակէտ պիտի ծառայէ։

— Լոնտոնէ կը հեռագրուի Վիեննայի թերթի մը թէ Եւրոքի դուքսը Զին պիտի մեկնի թէրթիպլ զրահաւորով։

— Լոնտոնի Սմերկեան զեսպանատունէն տեղեկու-

Թիւն արուեր է Ուսչինկիթըն Թէ Անգլիական կառավարութիւնն ազդարարեր է Բրիտանական նաւարանաց Թէ արգելուած է մարտանաւ ծախել Թէ Միացեալ Նահանգաց եւ Թէ Սպանիոյ, զի Անգլիական կառավարութիւնը կրնայ անոնց պէտք ունենալ :

Լոնտոնի մէջ զրոյց կայ Թէ Գորէայի կառավարութիւնը Ռուս գեսպանին զեկուցած է Թէ մտադիր է պաշտօնանկ ընել իր ծառայութեան մէջ գանուող ելեւմտական Ռուս խորհրդականը եւ զինուորական Ռուս մարզիչները :

— Ռուսները հեռագրական գործակալութիւնն ի Լոնտոն՝ Չինէ ստացաւ հեռագիր մը, որ կը հերքէ սալուրը Թէ Անգլիա Փեքինի մէջ բողոքած է Փորթ Արթըրի Ռուսիոյ թաղման դէմ :

— Անգլիոյ Ելեւմտական նախարար Մր. Պալֆուր արտաքին գործերը պիտի վարէ Լորտ Սալզպըրիի բացակայութեան միջոցին :

— Աթենքէ կը հեռագրուի Թէ Անգլիա, Ֆրանսա եւ Ռուսիա որոշած են երաշխաւորել Յունական ամբողջ փոխառութիւնը որ 155 միլիոն ֆրանքի կը հասնի, եւ Թէ Յոյն կառավարութիւնը պաշտօնապէս ծանուցած է Բ. Դրան Թէ պատրաստ պիտի ըլլայ պատերազմական սուգանքը վճարել Ալպիլ ամսայ մէջ :

— Կըսուի Թէ Աւստրիոյ նորընտիր վարչապետ Թոմս կոմսը որոշած է Բայխարթը լուծել եւ նոր ընտրութիւն հրամայել, եթէ փոքրամասնութիւնը ձեռնարկէ խորհրդարանի գործառնութիւններուն արգելք ըլլալ խափանարար դրութեամբ, ինչպէս եղաւ վերջին նստաշրջանին մէջ :

— Չինական փոխառութեան հրապարակումը, որ անցեալ շաբաթ օր տեղի պիտի ունենար Լոնտոնի մէջ եւ յետոյ երեկի թաղուեցաւ, դարձեալ յետաձգուած է մինչեւ յառաջիկայ երկուշաբթի (Մարտ 21) : Այս յապաղումները կը նշանակեն, կը կարծուի, Թէ դրամատունները կարեւորութիւն կ'ընծայեն փոխառութեան դէմ յարուցուած Ֆրանսական եւ Ռուսական բողոքներուն :

— Երկուշաբթի համազգեստաւոր Գերմանական սպայ մը սահմանադիւն Ֆրանսական հողն անցաւ եւ ձերբակալուեցաւ Ֆրանսացի անգէն աշխատաւորներու ձեռամբ : Ասոր վրայ Գերման մաքսային պահակներ օգնութեան փութացին եւ ստիպեցին Ֆրանսացի աշխատաւորներն ազատ արձակել սպան :

ԿԱՐԵՒՈՐ ԱՁԴ

Ազգային եւ օտար վարժարաններու մէջ դասախօսող ինչպէս նաեւ առեւտրական հրապարակին վրայ երկարատեւ փորձառութիւն ունեցող պատուաւոր անձ մը, Անգլիերէն եւ Գաղղիերէն թղթակցութեանց եւ Տոմարակալութեան գործնական դասեր տալու պատրաստ է : Դիմել խմբագրատունս :

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՊԱՂՏԱՏԵԱՆ ԳՐԱՏԱՆ
Սուրբան Համալ մասսէսի թիւ 14, Կ. Պոլիս

Ե. ՏԵՄԻՐՃԻՊԱՇԵԱՆ

ԲԱՌԱՐԱՆ

ՖՐԱՆՍԵՐԷՆԷ - ՀԱՅԵՐԷՆ

Դիմ 22 Ղրշ.

Սոյն Ֆրանսահայ բառարանը յօրինուած հետեւողութեամբ Լիդուէի տիեզերական բառագրքին, կը պարունակէ Ֆրանսերէն լեզուին գրեթէ բոլոր բառերն իրենց բոլոր առումներով, որպէս եւ ամենէն գործածական ոճերն : Տէմիւրճիպաշեան էֆէնտի բառաշինութեան մասին իւր ունեցած մասնաւոր յարմարութեամբն որով բազմաթիւ բառերով ճոխացուցած է հայ լեզուն, գտած է լեզուին պակսած գրական, գեղեցկագիտական, իմաստասիրական, գիտական եւ արհեստական բառերուն հայերէններն, այնպէս որ կատարեալ բառագիրք մը կրնայ համարուիլ Բառարանս ունեցած այս երբեակ առաւելութեամբ, այսինքն առաւելութիւն Ֆրանսերէն բառից, առաւելութիւն նոր առումնց, առաւելութիւն 15—20,000 նորաւերտ հայերէն բառից :

Այս բոլոր առաւելութեամբ Ֆրանսահայ Բառարանս, որ կը պարունակէ իբր 1000 էրես, կազմեալ կը ծախուի անօրինակ գնով :

ՀՈՆԿ - ԳՈՆԿ — ՍԷՅԼԱՆ — Կ. ՊՈԼԻՍ

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԹԵՅԻ

ԵԱՎՐՈՒԵԱՆ ԵՒ ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

ձեռք պէյ խանի ցրան կից թիւ 10

Ամենէն ընդարձակ թէյի վաճառատունն ի Կ.

Պոլիս, որ ճիւղեր ունի Օսմ.

Տէրութեան ամէն կողմերը :

Գաւառաց ապսպրանքները

փութով եւ խնամով կը գործադրուին :

Չինական, Հնդկ, Ճապոնի եւ Սէյլանի ընտրե-

լագոյն թէյք, ուղղակի բեր-

ուած հոս : Թէյի նոր հունձքն

սկսած է գալ : Չգուշացէք

սոյն վաճառանիշին կեղծե-

րէն :



Փնտռել ԵԱՎՐՈՒԵԱՆ եւ ԻՍԱԳՈՒԼԵԱՆ ստորագրութիւնը :

ԿՈՐՈՒՍԵԱԼ ԿՏԱԿԸ

ԳԼՈՒԽ ԺԱ.

ԴԵՄ ԱՌ ԴԵՄ

— Այո՛, ես ալ այդպէս կը փախաքիմ, ըստ առա-
ծին, անխելք բարեկամէ մ'աւելի նախամեծար է խելա-
ցի թշնամի մը ունենալ: Բայց այս կտակին գործն ա-
ռանձին չեմ կրնար կատարել, անպատճառ ինծի ընկեր
մը պէտք է. եւ ես՝ այս կտակիմ ինչո՞րք, ամենեւին
ջուրն ինկան չեմ նկատեր:

— Թերեւս, սակայն ես ձանձրացայ այլ եւս. եթէ
կ'ուզես դու քու հաշտոյդ աշխատէ, ես չեմ մասնակցիր.
եւ հօրս քով պիտի երթամ, անշուշտ երբ իրմէ ներսւմ
ինչորեւ չպիտի մերժէ զիս:

— Բայց որչա՞փ հաստ պիտի, միթէ՞ չկրցի՞ր հաս-
կընալ որ դու հայր չունիս, եւ մենք երկուքս ալ աշ-
խարհային կապերէ բոլորովին ազատ ենք: Պէտք է որ
ամէն վայրկեան ականջդ ի վար պօռամ թէ պիտակ մ'իս:

— Ո՛հ, Աստուած իմ, ի՞նչ տեսակ կեանք:

— Այս ի՞նչ տեսակ փորձանքի հանդիպեցանք, ես՝
մինչեւ հիմա կը կարծէի թէ խելքը դուրսը մարդու մը
հետ կը գործեմ, մինչդեռ ապուշի մը հետ է եզեր գործա-
տե՛ս, հիմա ալ նստեր ինքզինքը կ'անիծէ, կ'արծես իր
սիրունին համոզել կը ջանայ:

— Ո՛հ, ո՛հ, որոշումս տուած եմ, հօրս խօսքը մտիկ
պիտի ընեմ, վաղուան շոգենաւով իսկ կ'ալաց պիտի
ուզեւորիմ եւ անտի Պուքրէշ երթալով իր հրամանին
պիտի սպասեմ:

— Հա՛, հա՛, հա՛, ըստ Տիմիթրո բարձրաձայն իրն-
գալով եւ ձեռքը թեթեւ մը Պետիկին ուսին զարնելով,
սթափէ՛, բարեկամս, սթափէ՛, կը մոռնաս թէ Տիմիթ-
րոյի հետ կը խօսակցես, այդ սփեղցըփեղ խօսքերը եթէ
ուրիշի մը բոս թերեւս արժէք մ'ունենան, բայց կը
մոռնաս որ դու, Պետիկ, իմ բացարձակ ապրանքս ես,
այո՛, առանց իմ հրամանիս աեղէ՞ք չես կարող չարժիլ:

— Ինչո՞ւ, միթէ՞ ես ալ առանձինն մարդ մը չե՞մ
եւ կարծեմ կրնամ իմ կտակս համեմատ չարժիլ եւ ոչ
մէկուն շարժմանց համարը տալու պարտաւոր եմ. այո՛,
գիտեմ քեզի եւ այլոց քիչ մը պարտք ունիմ, բայց ա-
տիկա ամօթ լսան մը չէ եւ ուղեւորութիւնն ալ փա-
խուստ մը չէ: Որոշումս անդառնալի է, վաղը պիտի
պիտի մեկնիմ:

— Քանի որ իմ հրամանիս հակառակ չես կարող
չարժիլ, չպիտի մեկնիս կ'ըսեմ քեզ, իմ հրամանս այս
է. Միթէ՞ չե՞ս ըմբռներ որ Թուրքիոյ, Եգիպտոսի, Յու-
նաստանի, Աւստրիոյ եւ նոյն իսկ Ռուսիոյ մէջ ինծի
ծախուած կը համարուիս, այն սփրններուն համար գորս
գործած ես եւ որոց ապացոյցներն իմ քովս են:

— Եթէ ասոր կը վստահիս, յիշաւի զարմանալի է

ընթացքդ, Բիթէ՛ ես ալ քու գործած ոճիւրներուդ ապա-
ցոյցները չունիմ . . .

— Այո՛, սակայն անոնց ամենուն ալ մասնակցու-
թիւն ունիս, եթէ զիս բերան տաս, ինքզինքդ ալ մաս-
նած պիտի ըլլաս. բայց գիտես որ իմ ունեցած ապա-
ցոյցներս միմիայն քու առանձինն գործած ոճիւրներուդ
կը պատկանին, այո՛, թէպէտ ես հրահանգած եմ քեզ
այդ ոճիւրները, բայց ասոր ո՛ր եւ է ապացոյց չկայ: Ուս-
տի պարզենք խնդիրները, տղա՛ս, որովհետեւ դուն ա-
ւելի իմ զաւակս կը համարուիս քան թէ ուրիշի մը,
քանի որ Վիեննայի քաղաքապետութիւնը ինծի յանձնած
է զքեզ, ուստի պարզենք խնդիրները, վաղը պիտի չը
կրնաս մեկնիլ հոսկէ:

— Ո՛վ պիտի արդիլէ զիս, մանաւանդ որ գացած
տեղս Ռուսիան է, հոն ալ քեզ հայտակալու պարտա-
ւոր եմ, ինչպէս որ ըսիր քիչ մ'առաջ:

— Բայց ես քու հոս մնալգ կ'ուզեմ, հոս պէտք ու-
նիմ քեզ, վաղը եթէ մենիլ փորձես, գիտցած եղիւր որ
շոգենաւուն ասջեւ երկու ոստիկան հրամանքիդ պիտի
սպասեն, քեզ ուղղակի ոստիկանութեան դուռը տանե-
լու համար:

Պետիկ գունատեցաւ, ապա իր գործակցին լարած
այս ծուգակներուն վրայ զայրանալով կարմրեցաւ. բայց
Տիմիթրո խորհելու համար Պետիկին ամենեւին ժամա-
նակ չիմոլլով շարունակեց:

— Հիմա քիչ մը հանդարտէ, քօնեաք մը խմէ որ
ինքզինքդ գտնես, եւ գործի վրայ խօսինք, հին խնդիր-
ները փակենք, եղածն եղած է եւ անցածն ալ անցեալ,
մեք՝ գործի մարդիկս անյիշաչաւ ըլլալու ենք, հիմա
Դաւիթեանցի կտակի գործին վրայ խօսինք, քրանչելի
ճրագիր մը յօրինած եմ, որուն անպատճառ հաւանու-
թիւն կուտաս, այնպէս չէ՞:

— Ինչ պիտի ընենք որ, ինձ համար այդ գործին
մէջ ամէն յոյս կորսուած է, եւ ասոր համար էր որ
քիչ մը առաջ այնչափ յուսահատ վիճակակի մէջ էի:

— Տղայութիւն պէտք չէ, քեզի համար յուսահա-
տութիւնն ամօթ է, քանի որ սատանան մեզ օրհնած է,
ամէն բանին տակէն ելնելու ենք: Թո՛ղ որ խօսքս ա-
ւարտեմ եւ ծրագիրս պարզեմ: Ամենէն ապահով ճամ-
բան ամենէն գիւրիմն է. Հիմա այս գիշեր Դաւիթեանցի
կտակագիրը դարձեալ կը վերստանա . . .

— Այս գիշեր Դաւիթեանցի կտակը դարձեալ վե-
րստանում . . .

— Այո՛, ինչ կը զարմանաս, ըսածս ամենեւին տար-
օրինակ բան մը չէ:

— Մոռցա՛ր որ այն կտակ զարձեալ հայրագրիս
ձեռքն անցաւ:

Շարունակելի

Արտօնատէր Ա. ՄԱՐԿԵԱՆ

ՏՊԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՍԱՐԵՆԱՆ

(Նախկին ԳՈՂՏԱՆՍԿԱՆ Տպարան)

Կ. Պոլիս, Մարտի 24-ամ 14.